89

Հ. Ս. Խ. Հ.
ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գինը 20 կոպ.

ՅԵՐԵՎԱՆ — 1928

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. **Ուղեցույց անտառային աշխատավորի** 50 կ.
2. **Ս. Տագունց** — *Մեր անկլիքները (սպառված)* 20 »
3. **Հ. Փիրումյան յեվ Ա. Մելքոնյան** — *Ինչու ձեռնտու չի գործարանում յուղ և շվեյց. պանիր պատրաստելը (սպառ.)* 3 »
4. **Հ. Փիրումյան** — *Խմորույցները և նրանց մշակության յեղանակները (սպառ.)* 10 »
5. **Խ. Ավգուլբեկյան** — *Հ. Խ. Ս. Հ. Հողային Օրենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատավորական հողօգտագործություն (սպառված)* 40 »
6. **Պ. Հեքիմյան.** — *Թթենու մշակությունը* 10 »
7. **Պ. Հեքիմյան.** — *Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը* 10 »
8. **Խ. Տերիցյան.** — *Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ռ.* 50 »
9. **Կ. Մելիք-Շահնազարյան.** — *Ծխախոտի մշակությունը* 20 »
10. **Ս. Տրիգոլին.** — *Տասը պատգամ անասնապահին* 20 »
11. **Խ. Տերիցյան.** — *Անհատական, թե կոոպ. կաթնատնտեսություն* 10 »
12. **Հ. Հարությունյան.** — *Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառ.)* 5 »
13. **Մ. Թումանյան.** — *Շաքարացանքը և նրա նշանակությունը* 15 »
14. **Խս. Տեր-Ներսիսյան.** — *Ինչպես մշակել խաղողի այգիները (28 նկարով) (սպառ.)* 35 »
15. **Յերեսներս դեպի գյուղ.** — *Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեյի բանաձևը գյուղացիական հարցի մասին,* **Ս. Տագունցի** *նախաբանով (սպառված)* 14 »
16. **Հայաստանի Կոմմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի Չորրորդ Պլենումի Բանաձևերը** *(սպառված)* 15 »

1 ? JUL 2017

333.5

Հ. Ս. Խ. Հ.

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂ
Наркомпрос ССР

ՅԵՐԵՎԱՆ 1928

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
1-24049գր

Գրառեպվար № 673 բ. Տիրաժ 1500

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում պ. 494

Հաստատում եմ.
Հողժողկոմ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ
22 մարտի, 1928 թ.

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

### 1. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Հողաշինարարությունը տերրիտորիայի սոցիալ-տնտեսական հարմարեցումն է, այդ նույն տերրիտորիայի (հողի) օգտակար բոլոր հատկությունները հասարակական-արտադրական նպատակներով ավելի լրիվ չափով ու հեշտությամբ օգտագործելու համար։

2. Առաջին կետի պահանջն իրագործելու համար հողաշինարարությունը պետք է գոյություն ունեցող հողօգտագործությունը հիմնովին կարգավորի և հողի իրավունքի ու տնտեսական տեխնիքական նպատակահարմարության սահմաններում նորերն ստեղծի (Հողային Օրենսգիրք, հոդ. 163)։

3 Յերկրորդ կետով առաջադրված նպատակն իրագործելու համար ներքին հողաշինա-

լարությունը, հնարավորության բոլոր սահմաններում, պետք է վերացնի կամ մեղմացնի հողօգտագործության հետևյալ թերությունները (Հողային Օրենսգիրք, հոդ. 164)։

ա) Հողօգտագործության հեռամասնայ ձևերը (կետ յե),

բ) Բնակավայրերի ու բանկերի անբարեկարգությունը (կետ ը),

գ) Ջրային ու ճանապարհների ցանցի անբարեկարգությունը (կետ ե),

դ) Միջգյուղյա և ներքին հողացրվածությունը (կետ գ),

յե) Անկանոն սահմաններն և հողամասերի ու հողատեսքերի անհարմար դասավորությունը (կետ գ),

զ) Հանդի մեծությունն ու հողերի հեռավորությունը (կետ գ),

է) Հողի իրավունքի ու սահմանների վեճերը (կետ գ),

և ը) Առանձին դեպքերում նկատված այլ թերությունները։

4. Վերոհիշյալ կետերի պահանջներին առավելագույն չափով բավարարություն տալու համար, գլխավորապես հողաշինարարական նախագծեր կազմելու գործում պետք է սերտ մասնակցություն ունենան գյուղատնտեսները,



ջրային տեխնիկները և համապատասխան այլ մասնագետները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սույն կետում մատնանշված պահանջի կատարումը լրիվին ապահովելու համար մասնագետները, կարիք հանդիսացած և հողաշինարարի առաջադրած դեպքում, հողաշինարարությանը մասնակցում են առաջին հերթականության կարգով՝ իրենց այլ պարտականությունների նկատմամբ։

5. Հողաշինարարական ամեն տեսակի գործողություններ կատարվում են հողային մարմինների կամ շահագրգռված հողօգտագործողների նախաձեռնությամբ (Հողային Օրենսգիրք, հոդ. 166 և 178) և Հողժողկոմատի կողմից հաստատված ծրագրերի համաձայն։

6. Ներքին հողաշինարարությունը Հողժողկոմատի ընդհանուր ղեկավարության և անմիջական վերահսկողության տակ կատարում են գավհողբաժինները չերկրաչափ-հողաշինարարների միջոցով (Հողային Օրենսգիրք, հոդ. 165)։

7. Ներքին հողաշինարարության աշխատանքները տարվում են հետևյալ հերթականությամբ (Հողային Օրենսգիրք, հոդ. 177)։

ա) Հողաշինարարական գործի հարուցում ու նախապատրաստում և լիազորների ընտրություն.

բ) Հողաշինարարական տերրիտորիայի ըստուգում և արտանկարում.

գ) Աշխատավոր հողոգտագործող ձևերի և բաշխման միավորների ստուգում ու ցուցակագրություն.

դ) Հասարակական-կազմակերպչական խնդիրների լուծում.

յե) Տերրիտորիայի հողաշինարարական կըմախքի նախագծում, հողատեսքերի վորակավորում ու հաշվառում, շնչաբաժին հողի նորմայի վորոշում և Հողժողկոմատի նախնական հավանություն.

զ) Հողաշինարարական նախագծի կիրարկություն.

և ե) Ներքին հողաշինարարության հաստատություն ու փաստաթղթերի վերջնական ձևակերպություն։

8. Յերկրաչափ-հողաշինարարները պարտավոր են ներքին հողաշինարարության աշխատանքները մասսայականացնել այնքան, վոր հողաշինարարական գործողությունները յուրացվեն ու հավանություն գտնեն գյուղացիության լայն խավերի կողմից։

9. Ներքին հողաշինարարության ծախսերին շահագրգռված ազգաբնակչությունը մասնակցում ե Հ. Խ. Ս. Հ. Ժողկոմխորհի կողմից սահմանված չափով (Հողային Օրենսգիրք, հոդ. 174, 175 և 176)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմխորհի վորոշումը, հողաշինանարարական ծախսերի հատուցման մասին, տպագրված ե սույն հրահանգի հավելվածների բաժնում։



## 2. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

10. Հողաշինարարական գործը հարուցված ու սկսված ե համարվում, յերբ համապատասխան հողմարմինը յուր նախաձեռնությամբ կամ շահագրգռված հողօգտագործողների միջնորդության հետևանքով գրությամբ (ձև № 1) հանձնարարում ե յերկրաչափ հողաշինարարին ձեռնարկել տվյալ վայրի ներքին հողաշինարարության աշխատանքներին։

11. Աշխատանքի վայրը մեկնելուց առաջ յերկրաչափ-հողաշինարարը պարտավոր ե ծանոթանալ հողաշինարարական տերրիտորիայի մասին գոյություն ունեցող տվյալների հետ, նախապատրաստել պահանջվող բոլոր նյութերը և ստանալ անհրաժեշտ գործիքներ ու ցուցմունքներ այն հաշվով, վոր տեղ հասնելուց հետո անմիջապես ձեռնարկի հողաշինարարական գործողություններին։

12 Աշխատանքի վայրը հասնելուն պես յերկրաչափ-հողաշինարարը գումարում է շահագրգռված հողային հասարակության ընդհանուր ժողով և առաջադրում է հողաշինարարական գործողություններին մասնակցելու համար ընտրել լիազորներ, նախորոք կարդալով Հողային Որենսգրքի 170-րդ հոդվածը, և ապա ստորագրել տալով ընդհանուր ձևով մշակված արձանագրությունը (ձև № 2)։

13. Հասարակության լիազորների կազմի մեջ պետք է լինեն գյուղխորհրդի նախագահը և 2—4 հոգի ընտրական իրավունք վայելող գյուղացի՝ հողաշինարարական տերրիտորիային և հողերին լավ ծանոթ, կարող, վստահելի ու ակտիվ հողօգտագործողներից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ,—Լիազորների ընտրությունը պիտի կայացնել շրջգործկոմի մասնակցությամբ և կազմը որինական համարել նրա կողմից հաստատվելուց հետո։

## 3. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ԱՐՏԱՆԿԱՐՈՒՄ

14. Յերկրաչափ-հողաշինարարը դաշտային աշխատանքն սկսում է հողաշինարարական տերրիտորիայի արտաքին և միջգյուղյա սահմաններն ստուգելուց, հրավիրելով նաև հարևան



հողօգտագործողների լիազորներին (անտառապետ, պետհողգույքերի վարիչ, գյուղխորհուրդ, կազմակերպության ներկայացուցիչ և այլն), նախորոք ուղարկված ծանուցագրի միջոցով (ձև № 3)։ Արտաքին սահմաններն անցնելիս յերկրաչափ-հողաշինարարն արտանկարում է փաստացի օգտագործությունը։ Հատակագծի յեղած դեպքում փաստացի օգտագործությունն ստուգվում է իրավականի համեմատությամբ։

15. Յերկրաչափ-հողաշինարարը փաստացի օգտագործության մասին կազմում է արձանագրություն (ձև № 4), վորտեղ մուծվում են կողմերի դիտողությունները, ցանկություններն ու պահանջները։

16. Հողաշինարարական տերրիտորիայի արտաքին ու միջգյուղյա սահմաններն ստուգելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը մանրակրկիտ ճշտությամբ արտանկարում է հողերի բոլոր տեսքերը։

17. Տերրիտորիայի արտանկարման ժամանակ յերկրաչափ-հողաշինարարը պետք է զատ-զատ նշանակի հետևյալ հողատեսքերից՝ հողաշինարարական տերրիտորիայի վրա յեղածները.

| Հողեր | | | |
|---|---|---|---|
| Ջրարբի հողեր | Բակ | | |
| | Այգի և ծառաստ. | | Խաղողի |
| | | | Պտղատու |
| | | | Ընկույզ |
| | Վարելահող | ԿԱՐԳԵՐ | 1 |
| | | | 2 |
| | | | 3 |
| | Խոտհարք | | 1 |
| | | | 2 |
| | Գումար | | |
| Բակ | | | |
| Անջրդի հողեր | Ծառաստ. | | Պտղատու |
| | | | Ընկույզ |
| | Վարելահող | ԿԱՐԳԵՐ | 1 |
| | | | 2 |
| | | | 3 |
| | Խոտհարք | | 1 |
| | | | 2 |
| | | | 3 |
| | Գումար | | |
| Արոտներ | Մաքուր | | |
| | Քարքարոտ | | |
| | Մացառոտ | | |
| | Գումար | | |
| ԱՆՄՇԱԿԵԼԻ ՀՈՂԵՐ | Տեղակ. անտառ | | |
| | Ճանապարհներ | | |
| | Փոսեր-առուներ | | |
| | Ճահիճներ | | |
| | Գերեզմանատուն | | |
| | Ժայռեր-ավազուտներ | | |
| | Լճեր-լճակներ | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | Գումար | | |
| Ընդամենը | | | |

18. Յերկրաչափ-հողաշինարարը պարտավոր է առանձին ճշտությամբ արտանկարել տերրիտորիայի վրա գտնված զատ-զատ այգիները, հիմնական կառուցվածքները, ջրային ու ճանապարհների ցանցը, անվերանալի մարգերը և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այգիներից յուրաքանչյուրը պետք է համարագրել և ցուցակագրել նրանց ոգտագործող ծխերի անունով։



## 4. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԾԽԵՐԻ ՈՒ ԲԱՆԽՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19. Հողաշինարարական տերրիտորիայի արտանկարման հետ զուգընթաց յերկրաչափ-հողաշինարարը գյուղխորհրդի միջոցով և շրջգործկոմի ղեկավարությամբ ստուգում է հողային հասարակության ծխամատյանը և կազմում է հողի իրավունք ունեցող բոլոր ծխերի ու նրանց անդամների առանձին ցուցակ (ձև № 5)։

20. Ծխերի ու նրանց անդամների ցուցակագրության ժամանակ չի թույլատրվում (Հող. Որ., հոդ. 87) բաժանել—մանրացնել ծուխը, բացի այն դեպքերից, յերբ բաժանությունը ամրագրված կլինի շրջգործկոմում կամ հաստատված հողհանձնաժողովի վերջնական վորոշմամբ։ Մնացած բոլոր դեպքերում բաժանվել ցանկացողները պետք է այդ կատարեն սահմանված կարգով (Հող. Որենսգ., 71—82 հոդվածներ), ներքին հողաշինարարությունն ավարտվելուց հետո։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հողաշինարարական գործողությունների սկսելուց հետո կատարված բաժանությունները հաշվի չեն առնվում։

21. Հողօգտագործողների լրիվ ցուցակ կազմելու ժամանակ բոլոր ծխերի ներկայացու-

ցիչներին հատուկ հայտարարությամբ (ձև № 6) պետք է հրավիրել ստուգելու իրենց ծխի բոլոր անդամների անսխալ ցուցակագրված լինելու հանգամանքը։

22. Աշխատավոր հողօգտագործողների ցուցակի մեջ չպետք է մտցնել հետևյալ կարգի ծխերին ու անդամներին, կիրառելով Հողային Օրենսգրքի 13 րդ հոդվածի սահմանած արտոնությունները։

ա) Ովքեր ծխի ամբողջ կամ բաժան մասով ուրիշ վայր են տեղափոխվել (Հողային Օրենսգիրք, հոդ. 20).

բ) Ովքեր վեց տարի շարունակ բացակայում են գյուղից.

գ) Ովքեր աշխատավոր ձեռք ու միջոցներ ունեն, բայց հողը վարձով են տալիս (Հողային Օրենսգիրք, հոդ. 27).

դ) Ովքեր ծխի յեկամուտի մեծ մասն ստանում են առևտրից կամ այլ անաշխատ վաստակից և հողը մշակում են վարձու աշխատանքի կիրառությամբ.

յե) Ովքեր վեց տարի շարունակ հողը վարձու յեն տվել և իրենք չեն մշակել այն (Հողային Օրենսգիրք, հոդ. 29)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բացառություն կարող է լինել գավգործկոմի գիտությամբ ու հատուկ



թույլտվությամբ միայն այնպիսի ծխերի համար, վորոնք հողից ու հողագործությունից զատ յեկամուտի ուրիշ աղբյուր չունեն։

23. Յերկրորդ կինը մի շնչի հող ստանում է առանձին կտորով։ Յեթե ամուսնությունը տեղի յե ունեցել խորհրդայնացումից առաջ, այդ դեպքում 2-րդ կնոջ մի շնչի հողը տրվում է ծխի հողաբաժնի հետ միասին։

24. Յերկրաչափ-հողաշինարարը պետք է 22-րդ կետի պահանջների համաձայն կազմի աշխատավորական հողօգտագործության իրավունքից զրկվելիք, բայց փաստացիորեն հող ունեցող ծխերի ցուցակը և առանձին հարցաթերթերի վրա նշանակի նրանց տնտեսական կապը գյուղի հետ (ձև № 7)։

25. Աշխատավորական հողօգտագործության իրավունքից զրկվելիք ծխերի ու առանձին անդամների ցուցակները կազմելուց հետո, այդպիսիք դրվում են գյուղխորհրդի քննությանը։ Գյուղխորհրդի վորոշումները, ցուցակներն ու հարցաթերթերը յերեք որվա ընթացքում ներկայացվում են գավառակային գործադիր կոմիտեյի հաստատությանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Գավառակային գործադիր կոմիտեյի կողմից ևս զրկված ծխերը կարող են բողոք ներկայացնել հողհանձնաժողովին։

ԾԱՆՈԹ. — 2. — Հողհանձնաժողովի վերջնական վորոշմամբ աշխատավորական հողոգտագործության իրավունք վերստացած ծխերը բավարարվում են պահեստի հողերի հաշվին, յեթե վորոշումն տրվում է հողաշինարարությունն ավարտելուց հետո։

26. Հողային հասարակության սահմաններում Հողժողկոմատի կողմից հաստատված նորմայից ավելի հող լինելու դեպքում հողոգտագործողների ցուցակների մեջ մուծվում են վերաբնակիչներ, վորոնք բնիկներին համահավասար պայմաններով պետք է բավարարվեն թե բակերով և թե հողով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Խ. Հայաստանի ներկա սահմաններում ծննդավայր ունեցող վերաբնակիչները նոր վայրերում կարող են հող ստանալ գավգործկոմի թույլտվությամբ, յեթե նույն գավառից են և Հողժողկոմատի թույլտվությամբ, յեթե այլ գավառից են։

27. Գյուղի նորմայից ավելի հողերն առաջին հերթին պետք է հատկացվեն վերաբնակիչներից չքավորներին ու հիմնական կառուցվածքներ ունեցողներին։ Ավելի թվով վերաբնակիչները հողմարմինների թույլտվությամբ պետք է տեղափոխվեն մի ուրիշ հողառատ գյուղ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Նույն կատեգորիայի բոլոր վերաբնակիչների համար ազատ հող



չլինելու դեպքում, առաջին հերթին բավարարվում են նրանք, ովքեր ժամանակագրական կարգով շուտ են հաստատվել գյուղում։

## 5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Տերիտորիալ հողաշինարարական նախագիծը կազմելուց առաջ յերկրաչափ-հողաշինարարը գյուղատնտեսի ու կոլեկտիվ տնտեսությունների կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ պետք է հասարակության ընդհանուր ժողովի քննությանը դնի և արձանագրությամբ (ձև № 8) պարզի հետևյալ հարցերը.

ա) Հողոգտագործության տարբեր ձևերի համար կազմակերպված խմբավորումները.

բ) Բակերի չափն ու բնակավայրերի տեղադրությունը.

գ) Դպրոցական ֆոնդի քանակն ու տեղը.

և դ) Պահեստի հողերի օգտագործության խնդիրները։

29. Հողոգտագործության ձևերից անկախ, հասարակության անդամների մի մասը, Հողային Օրենսգրքի 133 րդ հոդվածի հիման վրա, կարող է նոր գյուղակ հիմնելու համար հողի զատում պահանջել, վոր առանձնապես խրախու-

ԾԱՆՈԹ. — 2. — Հողհանձնաժողովի վերջնական վորոշմամբ աշխատավորական հողօգտագործության իրավունք վերստացած ծխերը բավարարվում են պահեստի հողերի հաշվին, յեթե վորոշումն ստացվում է հողաշինարարությունն ավարտելուց հետո։

26. Հողային հասարակության սահմաններում Հողժողկոմատի կողմից հաստատված նորմայից ավելի հող լինելու դեպքում հողօգտագործողների ցուցակների մեջ մուծվում են վերաբնակիչներ, վորոնք բնիկներին համահավասար պայմաններով պետք է բավարարվեն թե բակերով և թե հողով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Խ. Հայաստանի ներկա սահմաններում ծննդավայր ունեցող վերաբնակիչները նոր վայրերում կարող են հող ստանալ գավգործկոմի թույլտվությամբ, յեթե նույն գավառից են և Հողժողկոմատի թույլտվությամբ, յեթե այլ գավառից են։

27. Գյուղի նորմայից ավելի հողերն առաջին հերթին պետք է հատկացվեն վերաբնակիչներից չքավորներին ու հիմնական կառուցվածքներ ունեցողներին։ Ավելի թվով վերաբնակիչները հողմարմինների թույլտվությամբ պետք է տեղափոխվեն մի ուրիշ հողառատ գյուղ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Նույն կատեգորիայի բոլոր վերաբնակիչների համար ազատ հող



չլինելու դեպքում, առաջին հերթին բավարարվում են նրանք, ովքեր ժամանակագրական կարգով շուտ են հաստատվել գյուղում։

## 5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Տերիտորիայի հողաշինարարական նախագիծը կազմելուց առաջ յերկրաչափ-հողաշինարարը գյուղատնտեսի ու կոլեկտիվ տնտեսությունների կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ պետք է հասարակության ընդհանուր ժողովի քննությանը դնի և արձանագրությամբ (ձև № 8) պարզի հետևյալ հարցերը.

ա) Հողօգտագործության տարբեր ձևերի համար կազմակերպված խմբավորումները.

բ) Բակերի չափն ու բնակավայրերի տեղադրությունը.

գ) Դպրոցական փոնդի քանակն ու տեղը.

և դ) Պահեստի հողերի օգտագործության խնդիրները։

29. Հողօգտագործության ձևերից անկախ, հասարակության անդամների մի մասը, Հողային Օրենսգրքի 133 րդ հոդվածի հիման վրա, կարող է նոր գյուղակ հիմնելու համար հողի ի գատումն պահանջել, վոր առանձնապես խրախու-

նելի չէ մեծ դաշտ ու հեռավոր հողեր ունեցող գյուղերում, մանավանդ թանկարժեք մշակույթների շրջանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 50 ծխից քիչ բնակչություն ունեցող գյուղակների համար պետք է ստացվի հատուկ թույլտվություն։

30. Մեկ ծխի բակի չափը պետք է լինի 0 15–0,25 հեկտար։ Բակերի տարածությունը մտնում է ծխի ընդհանուր հողաբաժնի չափի մեջ (Հողային Որենսգիրք, հոդ. 125), յեթե այդ մասին Հողժողկոմատը չունի առանձին վորոշում։

31, Բնակատեղերի շրջագիծը լայնացնելու դեպքում (Հողային Որենսգիրք, հոդ. 126) հասարակությունը պետք է ընտրի առողջապահական, ջրային, հաղորդակցության և այլ առավելություններ ունեցող շրջան։

32. Դպրոցական ֆոնդ կարող է զատվել 2–5 հեկտար տարածություն։ Զուտ գյուղատնտեսական դպրոցներին՝ 5—10 հեկտար։

33. Հասարակության ընդհանուր ժողովը կարող է վորոշում տալ յուր հողերի վրա բոլորովին նոր տեղում բնակավայր հիմնելու մասին։

34. Յերկրաչափ-հողաշինարարը հողերի վերաբաժանությունը կատարում է նույն հրահանգի պահանջների սահմաններում, առանց վիճակի ձևը կիրառելու։



## 6. ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՄԱԽՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՀՈՂԱՏԵՐՏԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ԾԽԱԲԱԺԻՆ ՀՈՂԻ ՆՈՐՄԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄ ՅԵՎ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

35. Տերրիտորիայի հողաշինարարական նախագծումը յերկրաչափ-հողաշինարարը կատարում է հատակագծի վրա՝ գյուղատնտեսի, ջրային տեխնիկի և, ըստ պահանջի, այլ մասնագետների համաձայնությամբ, ստանալով նրանց գրավոր յեզրակացությունը յուրաքանչյուր նախագծի մասին։

36. Հողաշինարարական նախագծն ամենից առաջ պետք է վորոշի միջգյուղյա նոր սահմանները և գտնի բնակավայրերի շրջագիծը, նկատի ունենալով հասարակության ընդհանուր ժողովի վորոշումները՝ բակերի տարածության ու բնակատեղի ընտրության մասին։

37. Գյուղերի փաստացի ոգտագործության սահմանները, առանց շահագրգռված կողմերի համաձայնության, կարող են փոփոխության յենթարկվել կամ հողերի փոխհատուցման կարգով և կամ հասարակությունների ունեցած նորմայից ավելի հողերի հաշվին։

38. Փաստացի ոգտագործության սահմանների փոփոխության հետևանքով այլ հասարա-

կուլտյան անցած հողերի վրա յեղած արժեքների (այգի, ծառաստան և այլն) տերերը ստանում են հատուկ արձանագրությամբ (ձև № 9) վորոշված հատուցումը, յեթե նրանք իրենց ծխի իրավազոր բոլոր անդամների գրավոր համաձայնությամբ այդ արժեքների գտնված նոր վայրում հաստատվելու ցանկություն չեն հայտնի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արժեքների գնահատման ու հատուցման դեմ դժգոհություն ունեցող ծխերը կարող են հարցի քննությունը տանել հողհանձնաժողով։

39. Յուրաքանչյուր ծխի հատկացվում է մեկ բակ (տնատեղ)։ Ութ և ավելի անդամ ունեցող ծխերին հատկացվում է յերկու տնատեղ միասին, իսկ յեթե հնարավորություն չը կա՝ յերկու տեղում։ Յերկու բակ ունեցող ծուխն ընտրում է նրանցից մեկը, իսկ յերկրորդ բակը յենթակա յե բաշխման, նրա վրա յեղած արժեքների հատուցման պայմանով։

40. Բնակավայրի շրջագծի մեջ բոլոր ծխերի համար պահանջվող բակերի ընդհանուր տարածության 25 տոկոսի չափով ավելի հող պետք է թողնել հասարակական շենքերի, զբոսավայրերի, հրապարակների ու փողոցների համար, իսկ 5 տոկոսի չափով՝ պահեստ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պահեստի բակերը պահվում են բազմանդամ ծխերի բաժանության կարիքների համար։



41. Բնակավայրի նոր շրջագիծը վորոշելիս պետք է նաև նկատի առնել, վոր հատակագծումը կիրառելուց հետո, բնակավայրերի շրջանում ընկած այգիներն ու պարտեզները նոր սահմաններում ամբողջական կերպով մնալու յեն իրենց տերերի ոգտագործության տակ (Հողային Որենսգիրք, հոդ. 116)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հողաշինարարության ու հատակագծման համար բացառիկ անհրաժեշտություն հանդիսացած դեպքում (Հողային Որենսգիրք, հոդ. 167) գավգործկոմի վորոշմամբ ու Հողժողկոմատի հատուկ թույլտվությամբ բնակավայրերի շրջագծում յեղած այգիները կարելի յե տնատեղերի վերածել ու բաշխման յենթարկել (Հողային Որենսգիրք, հոդ. 126), արժեքների տերերին հատուցում տալու պայմանով։

42. Նախորդ յերեք հոդվածների պահանջներին բավարարող չափով բնակավայր գտնելուց հետո, յերկրաչափը տեխնիքական հրահանգի պահանջած ձևով կազմում է բնակավայրի ամբողջ տարածության (հին և նոր) գծագիրը, հատակագծման նախագիծ կազմելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տերրիտորիայի վրա ստեղծվող միանգամայն նոր միավորի համար կազմվում է առանձին գծագիր։

43. Բնակավայրի նոր շրջագիծը վորոշելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը նախա-

գծում է վոռոգման ու ճանապարհների ցանցի հիմնական կմախքը։

44. Վոռոգման հիմնական ցանցը պետք է վորոշվի ջրային տեխնիկի համաձայնությամբ և վոչ միայն պետք է ապահովված լինի ջրի նորմալ ընթացքով, այլ և հնարավորության սահմաններում դաշտերին պետք է կապված լինի միանգամայն անկախ կերպով ու ամենից կարճ գծով։

45. Ճանապարհների հիմնական ցանցով հողօգտագործողների տնտեսական կենտրոնը (բնակավայրը) պետք է ամենից կարճ ու ապահով գծերով կապվի հարևան գյուղերի, հանգի և առանձին հողամասերի հետ։

46. Ճանապարհները լինում են.

ա) Համապետական՝ լայնությունը վորոշված կամ վորոշվում է համապատասխան մարմինների կողմից.

բ) Նախրատար՝ 10—20 մետր լայնութ.

գ) Տեղական կամ միջգյուղյա՝ 10 մետր լայնությամբ.

դ) Գյուղի դաշտերի՝ 6 մետր լայնությամբ.

ե) Փակուղիներ՝ 3 մետր լայնությամբ։

47. Նոր հանվելիք առուների լայնությունը վորոշում է ջրային տեխնիկը։ Առուների գրաված տարածությունը չի մտնում ճանապարհների համար նշված լայնության մեջ։



48. Վոռոգման ու ճանապարհների ցանցի հիմնական կմախքը նախագծելուց հետո, յերկրաչափ-հողաշինարարը պետք է նրանց վրա հենված նախագծի առանձին հողաշերտեր ամբողջ հանդում (վոչ բնակավայր), ապահովելով բոլոր հողաշերտերը լրացուցիչ առուներով ու ճանապարհներով։

49. Պարտադիր սերմնաշրջանառություն ունեցող համայնքներում (լեռնային-անասնապահական շրջան) հողաշերտերից առաջ յերկրաչափ-հողաշինարարը գյուղատնտեսի մասնակցությամբ պետք է նախագծի սերմնաշրջանառության դաշտերը, ինչպես և հարմարագույն սահմաններում պիտի զատի բաշխվող հողերը համայնական արոտից։

50. Հողաշերտերը պետք է նախագծվեն այնպես, վոր բոլոր ծխերի հողաբաժիններն ապահովված լինեն ինքնուրույն ճանապարհներով։ Նույն պահանջին պետք է բավարարություն տալ առուների հարցում՝ ջրարբի հողերի շրջանում։

51. Լեռնային շրջանների թեք մակերես ունեցող տարածությունների վրա հողաշերտերը պետք է այնպես նախագծվեն, վոր նրանց մեջ ընկնող արտերն ու ճանապարհներն ազատ լինեն անձրևներից լվացվելու և հեղեղման յենթարկվելու վտանգից։

52. Հողաշերտերի նորմալ լայնությունը պետք է ընդունել 150—200 մետր, նկատի ունենալով հողերի տեղադրությունը, ոռոգման հնարավորությունն ու հողային նորմաները։ Առաջին հանգամանքը նկատի առնելով, պետք է այնպիսի հողաշերտեր նախագծել, որ ծխի հասանելիք հողաբաժնի յերկարությունն ու լայնությունը 5:1 հարաբերության մոտ լինեն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ոռոգման և տեղադրության պայմանների թելադրանքով հողաշերտերի լայնությունը կարող է պակաս լինել այս կետում նշած չափից։

53. Հողաշերտերը և ջրային ու ճանապարհների ցանցը նախագծելիս հնարավորության բոլոր սահմաններում պետք է աշխատել, որ հիմնական կառուցվածքները և կանգուն այգիներն ու ծառաստանները չտուժեն ու չմասնատվեն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Կանգուն այգի կամ պարտեզ համարվում են 50%-ի չափով ծառերով ու վազով ծածկված ամբողջական հողային տարածությունները։

54. Ամբողջական զանգվածներով այգեպատ տարածությունների նկատմամբ պետք է հրաժարվել միապաղաղ ուղիղ հողաշերտեր նախագծելուց։ Նման պայմաններում պետք է նախագծել այն անհրաժեշտ ճանապարհները, որոնց բացակայությունը դժվարացնում է գյուղացիության աշխատանքն ու տնտեսական զարգացումը կամ խանգարում է շրջապատի նորմալ հաղորդակցությանը։



55. Ջրային ու ճանապարհների նոր ցանցի կմախքն ու հողաշերտերի տեղադրությունը նախագծելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը ներկայացնում է այն (գավհողբաժնի միջոցով) Հողժողկոմատի հաստատությանը։

56. Ստանալով Հողժողկոմատի հաստատությունը՝ ջրային ու ճանապարհների ցանցի և հողաշերտերի դասավորության նախագծի մասին՝ յերկրաչափ-հողաշինարարը տեղն ու տեղը կիրարկության է դնում այն, որպեսզի հետագա բոլոր աշխատանքները կառուցվեն կայուն հիմքերի վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ —1. Հողաշինարարության կմախքըն իրագործելիս քարե սյուններով պետք է ամրապնդվեն միջգյուղյա նոր սահմանները, բնակատեղի նոր շրջագիծն ու հողաշերտերի բոլոր անկյունները։

2.— Միջգյուղյա նոր սահմանների ամրացման մասին կազմվում է հատուկ արձանագրություն (ձև № 10)։

57. Նախորդ կետում մատնանշված աշխատանքներն ավարտելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը պահանջում է, որ գյուղխորհուրդը հասարակական աշխատանքներ կազմակերպի և անցկացնի ոռոգման ու ճանապարհների նոր ցանցը։

58. Հողաշերտերը և ջրային ու ճանապարհների ամբողջ ցանցը տեղն ու տեղը կիրարկության դնելու հետ միաժամանակ՝ յերկրաչափ-

հողաշինարարը, հասարակության լիազորների հետ միասին, պետք է նշանակի հողաշերտի մեջ ընկնող և բաշխման չենթակա բոլոր հողերի կատեգորիաները։ Այս դեպքում յերկրաչափ-հողաշինարարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի բաշխվող հողերը համայնական արոտից նպատակահարմար սահմաններում պահելու խնդրի վրա, մանավորապես լեռնային-անասնապահական վայրերում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հողատեսքերի դասման գործում հասարակության լիազորների կողմից միակողմանի և աչառու վերաբերմունք նկատելու դեպքում յերկրաչափ-հողաշինարարը պետք է հրավիրի և ստանա գյուղատնտեսի ցուցմունքները։

59. Յերկրաչափ-հողաշինարարը պիտի պահանջի, վոր լիազորներն առանձին զգուշությամբ ու ճշտությամբ վորոշեն բաշխվող հողերի կատեգորիաները, վորովհետև այդ աշխատանքից է կախված հողաշինարարության ամբողջ հաջողությունը աշխատավոր հողօգտագործողների համար։

60. Հողերի կատեգորիաները դաշտում վորոշելուց հետո, յերկրաչափ-հողաշինարարը պետք է այդ մասին զեկուցում ներկայացնի հասարակության ընդհանուր ժողովին և հատուկ արձանագրությամբ (ձև № 11) նրա վերջնական հաս-



տատությունն ստանա բաշխվող հողերի կատեգորիաների, ինչպես նաև այդ կատեգորիաների համեմատական արժեքի մասին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հողերի կատեգորիաների համեմատական արժեքը վորոշվում է՝ հողացրվածության արմատական կերացման դեպքում՝ լավ վորակի հողաբաժնի հանդեպ թույլ հողաբաժնի քանակն ընդարձակելու նպատակով։

61. Հասարակության ընդհանուր ժողովը յերկրաչափ-հողաշինարարի կողմից պետք է առանձնապես նախազգուշացվի, վոր ներքին հողաշինարարության ժամանակ ծխերի ունեցած հողերը փոփոխության կենթարկվեն (Հողային Որենսգիրք, հոդ. 167), ուստի անհրաժեշտ է շատ մեծ զգուշությամբ ու ճշտությամբ վորոշել դեռ բաշխման չենթարկված հողերի կատեգորիաները, վորոնց նկատմամբ ընդհանուր ժողովի վորոշումից հետո այլևս առարկություն չի ընդունվի վոչ ամբողջ հասարակության և վոչ առանձին ծխերի կողմից։

62. Հողերի կատեգորիաների նկատմամբ հասարակության ընդհանուր ժողովի վերջնական վորոշումներն ստանալուց հետո, յերկրաչափ հողաշինարարը պետք է հաշվի առնի, հայտարարի ու հողաշինարարական գործին կցի բաշխվող հողատեսքերի ճիշտ տարածության տախտակն

ըստ կատեգորիաների։ Այս տախտակը Հողժողկոմատին կամ գավգործկոմին ներկայացնելով՝ յերկրաչափ-հողաշինարարը պետք է վորոշում ստանա շնչաբաժին հողի նորմայի մասին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սակավահող գյուղերում նորմայի հաստատության պահանջ չի զգացվում և յերկրաչափ-հողաշինարարը հողի փաստացի քանակությունը բաշխում է հողօգտագործության իրավունք ունեցող բոլոր տեղացիների մեջ, յեթե այլ վայր գաղթողներ չը կան։

63. Նախորդ հոդվածներով պահանջված բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը նախագծում է ամբողջ ներքին հողաշինարարությունը բոլոր ծխերի համար, վորոշ կարգով համարագրում է ստեղծվող նոր հողամասերը և նշանակում է նրանց տարածությունը, կատեգորիան և ստացողի անունն ու ազգանունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերկրաչափ-հողաշինարարը պետք է հաշվի առնի մինչև նախագծման ժամը առաջացած փոփոխությունները (ծընունդ, մահ և այլն) ցուցակագրված ծխերի կազմի մեջ։

64. Նախագիծ կազմելիս պետք է նկատի առնել, վոր մեկ շնչից բաղկացած ծխերն ստանում են յերկու շնչի հողաբաժին, իսկ յերկու շնչից բաղկացած ծխերը՝ յերեք։



65. Վոռոգման ու տեղադրության ընձեռած հնարավորությունների սահմաններում նոր հողամասերը պետք է բավարարեն հողաշինարարության հետևյալ պահանջներին.

ա) Հողամասերի սահմանները պիտի անցնեն ուղիղ գծերով և ունենան քառանկյունի ձև, յեթե բնական արգելքներ չկան (գետ, խըճուղի, ձոր և այլն)։

բ) Հողամասերի մեջ չպետք է լինեն նրան մասնատող և մշակության համար անհաղթահարելի արգելքներ։

66. Ներքին հողաշինարարությունը նախագծելիս ծխերի համար պետք է հիմնովին վերացնել հողացրվածությունը (Հողային Օրենսգիրք, հոդ. 169)։ Դաշտային գոտում յուրաքանչյուր ծխին պիտի տալ առավելն յերկու հողամաս, իսկ լեռնային գոտում՝ 4 հողամաս՝ խոտհարքներն էլ հետը հաշված։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1.—Ցրված դրությամբ այգիներ ու ծառաստաններ ունեցող ծխերի հողամասերի թիվը կարելի յե ավելացնել մեկ կտորով։

2.—Հողերի ծառերով ու պարսպով շրջապատված լինելը հողացրվածության վերացման արգելք չի կարող լինել։

67. Այգեշատ գյուղերում հողացրվածությունը կարելի յե վերացնել, նախագծելով ծխերի այգիների կենտրոնացում՝ փոխանակության կամ հատուցման սկզբունքի վրա հենված։

68. Ներքին հողաշինարարության նախագծման ժամանակ յերկրաչափ-հողաշինարարը հատուկ հոգացողությամբ պետք է մի տեղում կենտրոնացված ու հարմար (մոտիկ, լավ ճանապարհով ապահովված ու թույլ հողերից ազատ) հողաբաժին հատկացնի հողաշինարարական տերրիտորիայի վրա կազմակերպված հողագործական ընկերություններին։

69. Ներքին հողաշինարարությունը նախագծելիս առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել հողհեռավորության վերացման վրա։ Այս խնդրում պետք է կիրառել հետևյալ ձևերը։

ա) Յեթե գյուղը շատ մեծ է, պետք է բաժանել այն թաղերի և յուրաքանչյուր թաղի ծխերին ըստ կատեգորիայի կամ ընդունված հարաբերությամբ հող հատկացնել այդ թաղին մոտիկ շրջանում։

բ) Յեթե գյուղը հատակագծված ու բակերը բաշխված են, յուրաքանչյուրին հողաբաժին տալ յուր բակի կողմից։

70. Յեթե չքավոր հողօգտագործողները կազմակերպված չլինեն ընկերությունների մեջ, այդ



դեպքում յերկրաչափ-հողաշինարարը պետք է նույնպես (կետ 67) հարմար հողաբաժիններ նախագծի ըստ խմբավորումների, վորպեսզի դյուրացվի չքավորների մեջ ագրի-կուլտուր աշխատանքներ տանելը, ինչպես նաև գյուղատնտեսական աջակցություն կազմակերպելն ու կոլլեկտիվացումը։

71. Ներքին հողաշինարարության հետևանքով նոր օգտագործողների հողերի վրա գտնված արժեքների դիմաց նրանց նախկին տերերին հատուցանելու համար (Հողային Օրենսգիրք, հոդ. 117) գավհողբաժնի ու շրջգործկոմի ներկայացուցիչների և գյուղատնտեսի մասնակցությամբ կազմվում է հանձնաժողով, վորը գնահատելով արժեքները, գյուղխորհրդի միջոցով առաջարկում է կողմերին առաջնորդվել կազմված արձանագրությամբ (ձև № 9)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գնահատության ու հատուցման մասին կողմերի մեջ առաջացած վեճերը լուծվում են հողհանձնաժողովի միջոցով։

72. Աշխատավորական հողօգտագործության իրավունք չունեցողների բակերի ու այգիների տակ ընկած պետական հողը բաշխվում է ընդհանուր հիմունքներով, իսկ հողի վրա յեղած արժեքների հատուցումը կատարվում է նախորդ կետով սահմանված կարգով։ Նույնն է կատարվում նաև հողօգտագործման իրավունքից զրկվածների

այգիների նկատմամբ, սակայն նրանց բակերը մնում են իրենց օգտագործության տակ, յեթե ծուխն ամբողջովին կամ մի մասով գյուղում է ապրում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գյուղում ապրող, բայց աշխատավորական հողօգտագործության իրավունք չունեցող ընտանիքների բակերի տարածության առավելագույն նորմա սահմանվում է մինչև 0,15 հեկտար (1500 քառ. մետր կամ 300 քառ. սաժ.)։

73. Ներքին հողաշինարարության նախագիծը պետք է համարագրի ու ցուցակագրի այն պիտանի տարածությունները, վորոնք մնում են դպրոցական և ազատ մնացող ֆոնդի մեջ։

## 7. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԻՐԱՐԿՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՏԵՂԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՅԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

74. Յերկրաչափ-հողաշինարարը ներքին հողաշինարարության հիմնական նախագիծը նախնական կիրարկության է դնում տեղում և ցույց է տալիս նոր հողաբաժինները ծխերի ու կազմակերպությունների ներկայացուցիչներին։

75. Յերկրաչափ-հողաշինարարը նախ անց է կացնում ու ակոսում է սերմնափոխության դաշտերի ու հողաշերտերի սահմանները (դաշտային շրջանների համար. տես կետ 55) և



ապա ճշտությամբ ցույց է տալիս առանձին հողօգտագործողների նոր հողաբաժինները։

76. Նախագծի կիրարկության ժամանակ հողաշերտերի անկյուններն ու ամբողջ յերկայնությունը 300—500-ական մետր հեռավորությամբ ամրացվում են (Հող. Օրենսգ. 184 հոդված) 50—60 սանտիմետր յերկայնություն ունեցող քարե սյուներով, իսկ առանձին ծխերի հողաբաժինների անկյունները՝ փայտե ցցերով։

77. Քարե սյուներով ամրացվում են նաև նոր կազմվող գյուղակների ու բնակավայրերի շըրջագծերը և ընկերությունների, խմբակցությունների, հասարակական կազմակերպությունների (դպրոց և այլն) ու հատվածային օգտագործություն ընդունած ծխերի հողաբաժինները։

78. Չը հատակագծված գյուղերում յերկրաչափ-հողաշինարարը, Հողժողկոմատի հավանությամբ ինքն է կազմում և կամ Հողժողկոմատից ստանում է բնակատեղի հատակագծման նախագիծը և կիրարկության է դնում այն։

79. Յերկրաչափ-հողաշինարարը նախ անց է կացնում փողոցները և զատում է հասարակական հողամասերը (զբոսավայր, հրապարակ, դպրոց, գյուղխորհուրդ, և այլն)։ Փողոցների ու հասարակական հողամասերի բոլոր անկյունները պիտի ամրացնել քարե սյուներով։

80. Բնակատեղի շրջագծի մեջ ընկնող կառուցված տարածության վրա հատակագիծը կիրառվում է գյուղխորհրդի ու շրջգործկոմի պաշտոնական համաձայնությամբ, յեթե առանձնահատուկ դժվարություններ ու արգելքներ չկան։

81. Հատակագծման այս կմախքը կիրառելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը կտրատում ու բաշխում է բակերը (տնատեղերը) ծխերի մեջ։

82. Դաշտի հողաշինարարությունն ավարտված գյուղերում բակերը բաշխվում են այնպես, վոր ծխի հողաբաժինն ու բակը, հնարավորության սահմանում, մոտ լինեն իրար։

83. Նոր բակեր առաջին հերթին ստանում են բակ չունեցող ծխերը, իսկ յերկրորդ հերթին այն տնտեսությունները, վորոնց բակը համեմատաբար փոքր է։

84. Նոր բակ ստացող ծխերը պետք է հրաժարվեն հին բակից հօգուտ հասարակության, յերբ հին բակն ամբողջովին կամ մասամբ պետք է օգտագործվի հատակագծման կարիքների համար (նոր փողոց, զբոսավայր, հրապարակ և այլն) և հօգուտ հարևանների, յերբ վերջինների բակը փոքր է սահմանված նորմայից։

85. Նոր բակ ստացող ծխերը հին բակից պետք է ամբողջովին հրաժարվեն և նրա վրա ունեցած արժեքները պետք է լուծարքի յենթարկեն մինչև 3 տարվա ընթացքում, նայած արժեքների չափին ու նրանց լուծարքի յենթարկելու հնարավորության։

86. Հին գյուղատեղը հատակագծման նոր պահանջներին պետք է հարմարվի տարիների ընթացքում և աստիճանաբար։ Առանձին ծխերին տնտեսական վնաս հասցնելու միջոցով հատակագծման շտապ կիրառումը թույլատրելի չէ։

87. Պահեստի բակերը մնում են գյուղխորհրդի օգտագործության տակ և նրանցից ստացած յեկամուտը հատկացվում է հատակագծման պահանջած բարեկարգությունների (կամուրջների ու առուների կարգավորում, զբոսավայրի ու ծառուղիների հիմնում և այլն)։

88. Ներքին հողաշինարարության նախագիծը և բնակատեղի հատակածգումը տեղում կիրառելուց հետո, յերկրաչափ-հողաշինարարը յերեք որվա ընթացքում ընդունում է առանձին հողօգտագործողների բողոքները (ձև № 12), նախագծով հատկացված հողաբաժինների դեմ։

89. Բողոքները քննվում են գավհողբաժնի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովի կողմից և յուրաքանչյուր բողոքի համար արձանագրվում է հանձնաժողովի յեզրակացությունը։

90. Յերկրաչափ-հողաշինարարը հանձնաժողովի հետ միասին պետք է աշխատեն բողոքներին

ընդառաջել ու բավարարել, սակայն վոչ չերբեք ի վնաս հողաշինարարության եյական պահանջների ու թելադրանքների (Հողային Որենսգիրք, հոդ. 185)։

91. Նախնական կիրարկության դրված նախագծի մասին առանձին հողոգտագործողների բողոքներն ու հանձնաժողովի յեզրակացություններն արձանագրելուց հետո յերկրաչափ-հողաշինարարը ներքին հողաշինարարության ամբողջ գործը, չվերացված վեճերի առթիվ գրած յուր համառոտ զեկուցագրի հետ միասին, գավհողբաժնի միջոցով ներկայացնում է Հողժողկոմատի հաստատության (Հողային Որենսգիրք, հոդ. 186)։

### 8. ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

92. Ստանալով Հողժողկոմատի հաստատությունը ներքին հողաշինարարության կիրարկության դրված նախագծի մասին, յերկրաչափ հողաշինարարը առաջին հերթին տեղն ու տեղը կատարում է այն բոլոր փոփոխությունները, վոր պահանջվում է նախագիծը վերջնականապես հաստատող վորոշումով։



93. Նախագիծը հաստատող վորոշումով պահանջված փոփոխությունները տեղում կիրառելուց հետո, յերկրաչափ-հողաշինարարը գումարում է հասարակության ընդհանուր ժողով և պաշտոնապես հայտարարում է.

ա) Ներքին հողաշինարարության ավարտան,

բ) Հետագա բողոքները հողհանձնաժողովին ուղղելու,

գ) Լիազորների կազմի լուծման,

դ) Հասարակության անմիջական տնօրինության տակ մնացած հողերը կառավարելու,

և յե) Հողաշինարարության սահմանների ու նշանների խախտման պատասխանատվության ու հետևանքների մասին (տես հավելված № 4)։

94. Դաշտային յերկրաչափական աշխատանքներն ավարտելուց հետո հողաշինարարը կազմում է ներքին հողաշինարարության հետևյալ հաստաթղթերը.

ա) Հատակագիծ՝ վատմանի թղթի վրա և նրա պաճեն՝ մոմաշորի վրա,

բ) Տերրիտորիայի հողատեսքերի տոմարագրության թերթ,

և գ) Հողային մատյան (չորս օրինակ)։

95. Հողաշինարարական փաստաթղթերից հատակագիծը, տոմարագրության թերթը և հողային մատյանների մի օրինակը հողաշինարական գործի հետ միասին ներկայացվում է Հողժողկոմատին, հատակագծի ու հողամատյանի պատճեններն ուղարկվում են հողային հասարակության, իսկ հողային մատյանի մնացած պատճենները՝ գավհողբաժնին ու գավառական գործադիր կոմիտեյին։

96. Առանձին հողօգտագործողներին հողային մատյանից քաղվածք տալիս է գյուղխորհուրդը, 4-րդ հավելվածում ցուցադրված (յերես 37) բովանդակությամբ.

**Հողվարչության պետ՝ Խ. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ**

**Գյուղվարչության պետ՝ Ս. ԱՌՈՅԱՆ**

**Հայջրտնտ. վարչութ. պետ՝ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**



Հավելված № 1

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

.................... գավառի .................... գավառակի ....................
հողային հասարակության ծխամատյանից և հողային մատյանից
առ «.........» .................... 192 թ.
Ծխամատյան №.............. յերես.............. №..............
Հողմատյան №.............. յերես.............. №..............

| Ծ Խ Ի Կ Ա Զ Մ Ը | | | | ՀՈՂԵՐԻ ՏԻՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| № № | Ազգանուն, անուն և հայրանուն տան գլխի և ծխի անդամների | Տարին | Ծխի բնույթ և (տան գլուխ, նրա կինը, յեղբայրը և այլն) | № № | Հողամասի անունը կամ № ըստ հատակագծի | Ընդամ. մեծ. | Կարտոֆ. դաշտ | ՉԱՓԸ Դեսյատին | ՉԱՓԸ Տասնորդ |
| 1 | | | | 1 | | | | | |
| 2 | | | | 2 | | | | | |
| 3 | | | | 3 | | | | | |
| | | | | | Գումար | | | | |

(Կնիք) «.........» .................... 192 թ. Գյուղխորհրդի նախագահ՝....................

Հավելված № 2.

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

**Գյուղական բնակավայրերի հատակագծման ու շինարարության մասին**

1928 թ. փետրվարի 24-ին

Գյուղերի բարեկարգությունը բարձրացնելու, սանիտարական-առողջապահական պայմանները բարելավելու և հողաշինարարական աշխատանքները պլանաչափ կարգով կատարելու նպատակով Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշում է.

1. Գյուղական բնակավայրերի հատակագծման նախագծեր կազմելու և կիրարկության դնելու իրավունքը վերապահել Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին, իսկ հատակագծված բնակավայրերի շինարարության վերահսկողությունը՝ նաև գավառային գործադիր կոմիտեներին։



2. Հատակագծված գյուղական բնակավայրերի շինարարության անմիջական ղեկավարությունը հանձնարարել. — ա) գավառակային գործադիր կոմիտեներին՝ տեխնիքական աջակցության ու անմիջական հսկողության իմաստով և բ) գյուղխորհուրդներին՝ ընդհանուր շինարարությունը կազմակերպելու, կատարելու և հատակագծի խախտումներ չթույլատրելու կամ կանխելու իմաստով։

3. Հատակագծված գյուղական բնակավայրերում նոր շինարարություն ձեռնարկող յուրաքանչյուր տնտեսություն պարտավոր է անշեղ ղեկավարվել հատակագծում նշանակված սահմաններով թե բակերի ու հարևանների և թե հրապարակների ու փողոցների նկատմամբ։

ԾԱՆՈԹ։—Իրենց բնակավայրերի՝ հատակագծով որոշված սահմանները չիմացող կամ այդ մասին կասկած ունեցող տնտեսությունները՝ շինարարություն ձեռնարկելուց առաջ պետք է ցուցմունք խնդրեն ու ստանան գյուղխորհրդից։

4. Հատակագծի պահանջների սահմաններում շինարարությունն ապահովելու համար գյուղխորհուրդները պարտավոր են.

ա) Վարչական կարգով դադարեցնել ու

վերացնել հաստատված հատակագիծը խախտող կառուցումները.

բ) Հասարակական աշխատանքներ կազմակերպելով կարգավորել նոր փողոցներն ու առուները և կառուցել համայնական շենքերը, հրապարակները, զբոսավայրերը և այլն։

5. Գավառակային գործադիր կոմիտեները պարտավոր են.

ա) Ըստ պահանջի՝ տեխնիքական աջակցություն ցույց տալ գյուղխորհուրդներին ծրագրված ու կանոնավոր շինարարություն կատարելու համար։

բ) Աչալուրջ հսկել գյուղխորհուրդների աշխատանքների վրա ամբողջ գյուղի և առանձին կառուցվածքների շինարարությունն ըստ հատակագծի կատարելու գործում։

ԾԱՆՈԹ.—Հատակագծման անշեղ կիրարկության ու հետագա շինարարության ասպարիզում թերացող գյուղխորհուրդների ու շինարարական սեկցիաների նախագահներին գավառակային գործադիր կոմիտեն կարող է վարչական ու դատական պատասխանատվության ենթարկել։

6. Գավառային գործադիր կոմիտեներին իրավունք վերապահել տնտեսական, կուլտուրական ու վարչական արժեք և զարգացման հատուկ



հեռանկար ունեցող բնակավայրերի համար, բացի հատակագծի անշեղ կիրառումից, առանձին որոշումներով պարտադիր դարձնել որոշ պահանջներ նաև բնակարանային-տնտեսական կառուցվածքների նկատմամբ, տալով ազգաբնակչությանը տիպար շենքերի հատակագծեր ու տեխնիքական լայն աջակցություն։

7. Հանձնարարել Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին ու Գյուղատնտեսական Բանկի Վարչությանը մելիորատիվ ու շինարարական վարկերը գլխավորապես հատկացնել այն գյուղերին, որտեղ հողաշինարարական աշխատանքները կատարված են և որոնք մասնավորապես հատակագծված են։

8. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին և գավառային գործադիր կոմիտեներին իրավունք է վերապահվում՝ ի զարգացումն և ի պարզաբանումն այս որոշման, հրատարակելու հրահանգներ ու պարտադիր որոշումներ։

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահի տեղակալ՝ Ա. ՄՌԱՎՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի գործերի կառավարիչ՝ Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Քարտուղար՝ Ա. ԹՈՔՄԱՋՅԱՆ

Յերևան

Հրատ. «Խորհրդ. Հայաստան», մարտ 28, № 73.

Հավելված № 3

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

**Հողաշինարարության ծախսերի հատուցման մասին**

1928 թ. փետրվարի 24-ին

ՀՍԽՀ Հողային Օրենսգրքի 174-րդ հոդվածի հիման վրա Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Ներքին հողաշինարարության ծախսերին մասնակից դարձնել հողային հասարակությունների կազմի մեջ մտնող և հողաբաժին ստացող բոլոր վճարունակ ծխերին։

ԾԱՆՈԹ.—1. Վճարունակ ծխերի ցուցակը կազմում է գյուղխորհուրդը և գավառակային գործկոմի հաստատությամբ ներկայացնում գավհողբաժնին։

ԾԱՆՈԹ.—2. Ցուցակների դեմ յեղած առարկությունները քննում է գավառային գործադիր կոմիտեն, վորի վորոշումը վերջնական է։



2. Հողաշինարարության ծախսերի հատուցումից ազատել չքավորներին, սակավազոր միջակ տնտեսություններին, գաղթի կարգով հող ստացողներին, հողաշինարարության հետևանքով տեղափոխվողներին և կոլլեկտիվ տնտեսությունների անդամներին։

3. Վճարունակ ծխերը հողաշինարարության ծախսերի հատուցմանը մասնակցում են միայն իրենց հողբաժնի իրական չափով, իսկ վճարից ազատվողների հողաշինարարության ծախսերը հոգացվում են պետության հաշվին, Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի նախահաշվով։

4. Մշակելի հողի յուրաքանչյուր հեկտարի լրիվ հողաշինարարության (արտանկարումից մինչև փաստաթղթեր տալը ներառյալ) ծախսերի հատուցման համար սահմանվում են հետևյալ չափերը.

ա) Թանգարժեք մշակույթների շրջաններում (Արարատյան դաշտ և այլն) 2 ռ. 50 կ.

բ) Մնացած շրջաններում—1 ռ. 50 կ.։

5. Հողաշինարարությունից անկախ հատակագծվող բնակավայրերում ծխերին հատկացվող յուրաքանչյուր բակի համար սահմանվում է մի ռուբլի վճար, իսկ այլ կարգի յերկրաչափական աշխատանքների համար՝ ըստ իրական արժեքի

(մասնագետի աշխատավարձ և գործառնական ու փոխադրական միջոցներ)։

6. Բացի 4-րդ և 5-րդ հոդվածներում նշանակված վճարից շահագրգռված բոլոր ծխերը պարտավոր են տրամադրելու հողաշինարարներին նյութեր (քարե սյուներ կամ փայտե ցցեր) իրենց հողբաժինների սահմաններն ամրացնելու համար։

7. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հաստատված պլանային հողաշինարարության ծախսերի գանձումը կատարվում է անվիճելի կարգով։

8. Հողաշինարարության ծախսերի հատուցման կարգով պահանջվող գումարները մուծվում են Հայաստանի Գյուղատնտեսական Բանկ՝ ի շիջեցումն Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին տրված հողաշինարարական վարկերի։

9. Հողաշինարարության ծախսերի հատուցման մանրամասն պայմաններն ու ժամկետները սահմանվում են Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի ու Գյուղատնտեսական Բանկի Վարչության կողմից մշակված կանոններով։

10. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին իրավունք է վերապահվում ի զար-



գացումն և ի պարզաբանություն այս որոշման հրատարակելու հրահանգներ, հողօրգանների ու հողային հասարակությունների ընդհանուր ղեկավարության համար։

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահի տեղակալ՝ Ա. ՄՌԱՎՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի գործերի կառավարիչ՝ Վ. Կոստանյան

Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Քարտուղար՝ Ա. ԹՈՔՄԱՋՅԱՆ

Յերևան
Հրատ. «Խորհրդ. Հայաստ»., մարտ 30, № 75

Հավելված № 4

# ՔԱՂՎԱԾՔ

## Հ. Ս. Խ. Հ. ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԻՑ

ՀՈԴՎ. 125. — Հողաշինարարության կամ յերկրաբաշխական-հողաբաշխական, լեռնահատակման և տեղագրական աշխատանքներ կատարելու ժամանակ ժամանակավորապես կամ ընդմիշտ դրված հատուկ նշանները վոչնչացնելու, փչացնելու, քանդելու կամ տեղափոխելու այլ և վոչ պատշաճ վայրերում կամայական կերպով նոր նշաններ դնելու համար, կիրառվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև յերեք հարյուր ռուբլի։

(Օրենք. և Կարգ. Ժողովածու, 1927 թ. Սեպտ., № 11, Բաժին I)։

---

# ՑԱՆԿ


Եջ

1. Հիմնական խնդիրներ . . . . . . . . . 3
2. Հողաշինարարական գործի հատուցում ու նախապատրաստություն յեվ լիազորների ընտրություն . . . . . . . . . 7
3. Հողաշինարարական տերրիտորիայի ստուգում յեվ արտանկարում . . . . 9
4. Աշխատավոր հողոգտագործող ծխերի ու բաշխման միավորների ցուցակագրություն . . . . . . . . . . . . . 11
5. Հասարակական — կազմակերպչական խնդիրների լուծումն . . . . . . . . . 15
6. Տերրիտորիայի հողաշինարարական կմախքի նախագծում, հողաշերտերի վորակավորում ու հաշվառում, շնչաբաժին հողի նորմայի վորոշում յեվ Հողժողկոմատի նախնական հավանություն . . . . . . . . . . . . . . 17
7. Հողաշինարարական նախագծի կիրարկության, բնակատեղի հատակագծում յեվ բողոքների ընդունելություն . . . . 30
8. Ներքին հողաշինարարության հաստատություն ու փաստաթղթերի վերջնական ձեվակերպություն . . . . . . . . . 34

## ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ՀՍԽՀ Հողային Օրենսգիրք . . . . . . 30 կ.
2. Խ. Ավգալբեգյան.—ՀՍԽՀ Հողային Օրենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մաս I, աշխատավորական հողօգտագործություն (սպառված) . . . . 40 »
3. Խ. Ավգալբեգյան.—Գյուղի հողաշինարարությունը . . . . . . . . . . . . . 20 »
4. Հրահանգ Ներքին հողաշինարարության 20 »

Դիմել՝ Յերևան, Հողժողկոմատ

17. Ռ. Օրմենյան.—Խոշոր եղջյուրավոր անասունների ժանտախտը 15 »
18. Հ. Ազատյան.—Գյուղատնտեսական բանվորությունը և միջազգային կոմունիստական շարժումը (սպառ.) 40 »
19. Ն. Խան-Ազյան.—Ուղեցույց արդյունավետ խոզաբուծության 15 »
20. Յերգինանցով. Հավաբուծ. և նրա օգուտն (սպառ.) 20 »
21. Ա. Դանելբեգ.—Լավ է ուշ, քան յերբեք (ագրո-պիյես) 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Կտավատը և կանեփը (սպառ.) 20 »
23. Մ. Լուկաշին.—Անդրկովկասի տնտեսական դրությունը (սպառ.) 15 »
2 . Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անտառներից փայտեղեն բաց թողնելու համար (պաշտոնական)
25. Պրոֆ. Ա. Քալանթար.—Կաթնատու կովի կերակրումը 30 »
26. Ա. Ա. Տրիֆոնով.—Ինչու պետք է ցելը շուտ անել 15 »
27. Ա. Բակունց.—Գալուստի վիկը (ագրո-պատմվածք) 15 »
28. Ա. Բակունց.—Կարտոֆիլի մշակությունը 20 »
29. Լ. Սուբբոտին.—Կովի դատը (ագրո-պիյես) 20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Տզկանեփ (սպառ.) 5 »
31. Խս. Տեր-Ներսիսյան—.Պտղատու ծառերի վնասատուներն ու հիվանդությունները 25 »
32. Խ. Ավգալբեգյան.—Գյուղի հողաշինարարությունը 20 »
33. Արազի.— Տրակտորը (ագրո-պատմվածք) 15 »
34. Ցոլեացի.—Խորհրդավոր տրտունջներ (ագրո-զրույց)
35. Խենկո-Աղբեր.—Գյուղատնտես-ան... և իր ագրո-զրույցը
36. Ս. Տրիգոլին.—Տասը պատգամ ա... հին (բ տպագր)

ՀՀ Ազգային գրադարան
NL0863964

37. **Մ. Խանզադյան.**—*Մեղվաբուծութ[...] Նախնական ձեռնարկ*
38. **Արամայիս Յերզնկյան.**—*Մեր գյուղատնտեսության հերթական խնդիրներից* 40 »
39. **Օ. Արանձասյան.**—*Գութան, թե արոր (սպռ.)* 10 »
40. **Վ. Բոյկով.**—*Այծն աղքատի կովն է (սպառ.)* 20 »
41. **Խս. Տեր-Ներսիսյան.**—*Գոմաղբը* 20 »
42. **Ի. Կուզնեցով.**—*Լենինը և գյուղացիութ.* 30 »
43. **Ս. Մուշեղյան.**—*Անտառը պետք է հաշվով կտրել* 5 »
44. **Խս. Տեր-Ներսիսյան.**—*Ինչպես պատվաստել պտղատու ծառերը* 10 »
45. **Ա. Բակունց.**—*Սառըջուրի կոմունան* 30 »
46. **Հ. Ազատյան.**—*Ցեղապաշտից դեպի սոցիալիզմ՝ կոոպերացիայի միջոցով* 1 ռ. 50 »
47. **Վ. Ս. Միխայլով.**—*Տավարի վարակիչ հիվանդությունները* 5 »
48. **Մ. Թումանյան.**—*Վիկը* 5 »
49. **Պ. Քալանթարյան.**—*Գոմաղբ* 5 »

## ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. **Ս. Վերմիշյան.**—*Պտղատու այգին ու նրա խնամքը*
2. **Ս. Մարգարյան**—*Կոչխարաբուծություն*
3. **Պրոֆ. Ավ. Քալանթար.**—*Կաթնատու կովի ընտրությունը*
4. **Օ. Արանձասյան.**—*Գութանները և նրանց ընտրությունն ու խնամքը*
5. **Խ. Ցերիցյան.**—*Հորթերի կերակրելու և խնամելու ռացիոնալ ձևերը*
6. **Օր. Խաչիկյան.**—*Հանրամատչելի զրույցներ գինեգործութ. մասին*
7. **Նոյեմբերի ճանապարհին** *(ժողովածու)*

**ԴԻՄԵԼ՝ Յերևան,** *Հողժողկոմատ՝ Հրատարակչության: Պետհրատի կենտրոնական յև գավառական գրախանութներին, Գավհողբաժիններին:*